ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-94

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

ORCID - https://orcid.org/0000-0001-7669-8626

Հիմնաբառեր. *սոցիալական վստահություն, տնտեսական աճ, համաշխարհային արժեքների հարցում*

Հոդվածում քննարկվում են սոցիալական վստահության կատեգորիան, վերջինիս՝ տնտեսական զարգացման վրա ազդելու կառուցակարգերը, վստահության և տնտեսական աճի փոխազդեցությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական վստահության ցածր մակարդակ ունեցող երկրներում վստահության աճը նպաստում է երկրի տնտեսական աճին: Միաժամանակ, սոցիալական վստահությունը երկարաժամկետում կայուն գործոն է, որի վրա ազդելու հնարավորությունները սահմանափակ են՝ պայմանավորված դրա ձևավորման հանգամանքներով:

Վերջին տասնամյակներում տնտեսագիտական գրականության մեջ լայնորեն քննարկվում է սոցիալական վստահության և տնտեսական զարգացման փոխազդեցությունը: Ընդհանրապես, գրեթե ամեն մի տնտեսական գործարք հիմնվում է վստահության վրա: Երբ բանկը վարկ է տրամադրում ֆիզիկական անձին, պետք է ինչ-որ չափով համոզված լինի, որ տվյալ անձը կվերադարձնի գումարը կամ, օրինակ, երբ մենք առցանց գնում ենք կատարում և վճարում դեռևս չառաքված ապրանքի համար, ունենք որոշակի վստահություն, որ գործարքի մյուս կողմը կիրականացնի առաքումը: Առաջին հայացքից թվում է, թե զգուշավորությունը (օրինակ՝ պայմանագրում բոլոր հնարավոր դեպքերի տեղի ունենալու պարագայում կողմերի պարտավորությունների մանրամասն շարադրումը), հնարավորություն տալով կենտրոնացնելու ռեսուրսները, կարող է նպաստել տնտեսական զարգացմանը: Սակայն, ինչպես նշում են Սյուզն Վերդուչին և Անդրեաս Շրոյերը՝ «սոցիալական վստահությունը նվազեցնում է գործարքային ծախսերը, քանի որ կարիք չի

լինում այնպիսի ծախսատար գործունեության, ինչպիսին այլոց վարքագծի մշտադիտարկումն է: Վստահությունը խթանում է համագործակցությունը: Բացի այդ, այն նպաստում է գիտելիքի փոխանակմանը և բաց հաղորդակցությանը»[1]: Վստահության ցածր մակարդակի պարագայում գործարքի կողմերը զգալի ժամանակ և ռեսուրսներ են վատնում միմյանց ուսումնասիրության վրա: Համաձայն Արրոյի՝ «կարելի է իրավացիորեն պնդել, որ տնտեսական հետամնացության առկայությունն աշխարհում հիմնականում կարելի է բացատրել փոխադարձ վստահության բացակայությամբ»[2]:

ՏՀԶԿ-ն վստահությունը սահմանում է որպես անձի հավատն առ այն, որ մեկ այլ անձ կամ կազմակերպություն կգործի իր (դրական) սպասումներին համապատասխան[3]: Այլ կերպ ասած, վստահությունը կարելի է սահմանել որպես գործարքի մի կողմի հավատը կամ համոզմունքը, որ գործարքի մյուս կողմը չի խաբի: Գրականության մեջ առանձնացվում է վստահության մի քանի տեսակ՝ սոցիալական, քաղաքական, բիզնեսի, կազմակերպության նկատմամբ: Դրանցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով կարող է ազդել երկրի տնտեսության վրա: Նորագույն գրականության մեջ վստահությունը տարանջատվում է ըստ երեք մակարդակի. ա) լիակատար վստահություն, բ) միջանձնային կամ ընդհանուր վստահություն, գ) համակարգային կամ ինստիտուցիոնալ վստահություն: Առաջինն ընտանեկան կապերի միջոցով ձևավորվող վստահությունն է: Միջանձնային վստահությունը ծագում է ավելի լայն, երկրորդային հարաբերություններում՝ ամենօրյա փոխազդեցության հիման վրա, այն մարդկանց միջև, որոնք միմյանց չեն ճանաչում: Տնտեսագետներից շատերը կենտրոնանում են միջանձնային վստահության վրա՝ ուսումնասիրելով տնտեսական աճի և վստահության կապը: Սոցիալական վստահությունը միջանձնային վստահության աստիճանն է, վստահության մակարդակը հասարակության այն անդամների միջև, որոնք միմյանց չեն ճանաչում:

Իսկ ինչ կառուցակարգերով է վստահությունն ազդում տնտեսական աճի վրա: Վստահությունը տնտեսական ցուցանիշների վրա կարող է ազդել երկու հիմնական ուղիներով՝ «միկրոտնտեսական» և «մակրոքաղաքական»: Միկրոմակարդակում սոցիալական կապերն ու միջանձնային վստահությունը նվազեցնում են գործարքային ծախսերը, ապահովում գործարքների կատարումը: Մակրոմակարդակում վստահության հիմքում առկա սոցիալական համերաշխությունը կարող է ամրապնդել ժողովրդավարական կառավարումը, բարձրացնել պետական կառավարման արդյունավետության աստիճանն ու բարելավել տնտեսական քաղաքականության որակը[4]: Մակրոմակարդակում սոցիալական վստահությունը տնտեսական արդյունքի վրա ազդում է անուղղակիորեն՝ պետական կառավարման արդյունավետության աստիճանի բարձրացմամբ:

Ըստ Օրհուսի համալսարանի պրոֆեսոր Քրիստիան Բյորնսկովի՝ վստահությունը տնտեսական աճի վրա նշանակալի ազդեցություն է ունենում երկու հիմնական ուղիներով՝ դպրոցական կրթություն և կառավարում: Ընդ որում, հեղինակը պնդում է, որ միջազգային հարցումների միջոցով ստացված սոցիալական վստահության ցուցանիշները բավական կայուն են, որն անհամատեղելի է այն գաղափարի հետ, որ դպրոցական կրթությունն ու կառավարումն են առաջ բերում սոցիալական վստահության տվյալ պահի մակարդակը[5]: Այլ կերպ ասած, կրթությունը և արդյունավետ կառավարումը միջանձնային վստահությունը կանխորոշող գործոններ չեն, այլ սոցիալական վստահությունն է ազդում

[1] Verducci S., Schröer A. (2010) Social Trust. In: Anheier H.K., Toepler S. (eds) International Encyclopedia of Civil Society. Springer, New York, NY. https://doi.org/10.1007/978-0-387-93996-4_68

[2] Knack, Stephen (2001). Trust, assocational life, and economic performance, MPRA Paper 27247, University Library of Munich, Germany, https://www.oecd.org/education/innovation-education/1825662.pdf

[3] Доверие и недоверие в России, https://www.finam.ru/analysis/forecasts/doverie-i-nedoverie-v-rossii-20181015-111223/

[4] Knack, Stephen (2001), Trust, assocational life, and economic performance, MPRA Paper 27247, University Library of Munich, Germany, https://www.oecd.org/education/innovation-education/1825662.pdf

[5] Bjørnskov, Christian (2012), How Does Social Trust Affect Economic Growth?. Southern Economic Journal: April 2012, Vol. 78, No. 4, 1346–1368.

կրթության և կառավարման վրա՝ այդպիսով անդրադառնալով նաև տնտեսական աճի վրա:

Զակը և Նեկն ուսումնասիրել են սոցիալական վստահության և տնտեսական աճի դրական կապը՝ գալով այն եզրահանգման, որ վստահության աճը 15 տոկոսային կետով հանգեցնում է ՀՆԱ 1 տոկոսային կետով աճի[6]: Ֆելիք Ռոթի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տվել, որ այն երկրները, որտեղ սոցիալական վստահությունը ցածր մակարդակում է, վստահության աճը հանգեցնում է տնտեսական աճի, իսկ այն երկրներում, որտեղ առկա է վստահության բավական բարձր մակարդակ, վստահության աճը կարող է անգամ խանգարել տնտեսական աճին[7]: Նանեստադը պընդում է, որ սկանդինավյան երկրներում վստահության բարձր մակարդակը թույլ է տվել զարգացնել համընդհանուր բարեկեցության համակարգերը, որոնք մեծ չափով հիմնված են պետական հատվածի վրա, որն էլ, ամենայն հավանականությամբ, խոչընդոտելու է տնտեսության հետագա աճը: Հետևապես՝ վստահության աճին միտված քաղաքականությունը կարևոր է այն երկրներում, որտեղ վերջինիս մակարդակը ցածր է:

Վստահության վերաբերյալ գնահատումների զգալի մասը հիմնվում է հարցումների միջոցով ստացված տվյալների վրա: Շատ հաճախ տնտեսական զարգացման վրա վստահության ունեցած ազդեցության գնահատման համար կիրառվում են սոցիալական վստահության ընդհանրացված տվյալներ, որոնք արտահայտվում են հետևյալ հարցի պատասխանում. «Արդյո՞ք մարդկանց մեծ մասին կարելի է վստահել, թե՞ պետք է զգուշանալ նրանցից»:

Համաշխարհային արժեքների հարցումների 2017-2022 թթ. արդյունքների համաձայն՝ բարձր եկամուտ ունեցող երկրներում սոցիալական վստահության միջին մակարդակը կազմել է 35,8%, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 16%, իսկ միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում՝ 13,8%[8]: Եթե համեմատենք նախորդ ալիքի արդյունքների հետ, որն ընդգրկում է 2010-2014 թթ. հարցումների արդյունքները, ապա պարզ է դառնում, որ թեև ոչ նշանակալի, բայց, ընդհանուր առմամբ, վստահության մակարդակի անկում է նկատվում:

Հայաստանի բնակչությանը բնորոշ է վստահության ցածր մակարդակը: Ըստ համաշխարհային արժեքների հարցման տվյալների՝ ՀՀ բնակչության միայն 8,5%-ն է կարծում, որ «մարդկանց կարելի է վստահել»[9]: Սա տվյալ եկամտային խմբի միջին ցուցանիշից (16%) ցածր ցուցանիշ է: Համաշխարհային արժեքների հարցման 6-րդ ալիքի (2010-2014 թթ.) արդյունքների համաձայն՝ «մարդկանց կարելի է վստահել» պնդմանը դրականորեն է արձագանքել ՀՀ բնակչության 10.9 %-ը, իսկ 3-րդ ալիքի տվյալների համաձայն (1995-1998 թթ.)՝ 23.5 %-ը: Մյուս ալիքների հարցումներում ՀՀ-ի մասին տվյալներ առկա չեն: Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում սոցիալական վստահության մակարդակը ոչ միայն ցածր է, այլև ունի նվազման միտում:

Իսկ ինչպես ազդել սոցիալական վստահության վրա: Սոցիալական վստահության վրա ազդում են ոչ միայն հասարակության շրջանում պատմականորեն ձևավորված, այսպես կոչված, «մշակութային կանոննե-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Սոցիալական վստահության մակարդակն ըստ երկրների խմբերի[10]

Երկրների խումբ	7-րդ ալիք (2017-2022)	6-րդ ալիք (2010-2014)
Բարձր եկամուտ ունեցող երկրներ	35,8	37,5
Միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներ	16,0	17,7
Միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներ	13,8	17,5

[6] Roth, Felix, Does Too Much Trust Hamper Economic Growth? Kyklos, Vol. 62, No. 1, pp. 103-128, February 2009, Available at SSRN: https://ssrn.com/abstract=1329776 or http://dx.doi.org/10.1111/j.1467-6435.2009.00424.x

[7] Նույն տեղում:

[8] Ցածր եկամուտ ունեցող երկրների վերաբերյալ բավարար տվյալներ առկա չեն:

[9] Ըստ համաշխարհային արժեքների հարցման 7-րդ ալիքի (2017-2022) տվյալների՝ https://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV7.jsp

[10] Հեղինակի հաշվարկները՝ հիմնված համաշխարհային արժեքների հարցումների արդյունքների վրա:

ը», այլև հաղորդակցության ամենօրյա փորձը[11]: Հիմնարար գործոնների ազդեցությամբ ձևավորվող ընդհանրացված վստահության մակարդակը կայուն է երկարաժամկետ հատվածում, և հետևապես՝ դժվար է պնդել, որ սոցիալական վստահության փոփոխությամբ հնարավորություն կա ազդելու տնտեսության վրա[12]: Սակայն, միաժամանակ, չպետք է ենթադրել, որ տնտեսական զարգացումը կանխորոշված և պայմանավորված է երկրների մշակույթով: Օրենքի գերակայությունը, արդյունավետ կառավարումը կարող են պաշտպանել սոցիալական վստահությունը, երբ հասարակությունը բախվում է բացասական ցնցումների (շոկերի): Հետևապես՝ այն երկրներում, որտեղ սոցիալական վստահության մակարդակը ցածր է, տնտեսական զարգացման տեսանկյունից ծայրաստիճան մեծանում է ֆորմալ ինստիտուտների, քաղաքականության միջոցառումների դերը:

[11] Борнукова К., Годес Н., Щерба Е., Доверие в экономике: что это, как работает и для чего нужно?, 2020, https://www.beroc.org/upload/medialibrary/745/74564f3df46fe2f07226ea41425602d1.pdf

[12] Доверие и недоверие в России, https://www.finam.ru/analysis/forecasts/doverie-i-nedoverie-v-rossii-20181015-111223/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Борнукова К., Годес Н., Щерба Е., Доверие в экономике: что это, как работает и для чего нужно?, 2020, https://www.beroc.org/upload/medialibrary/745/74564f3df46fe2f07226ea41425602d1.pdf
2. Доверие и недоверие в России, https://www.finam.ru/analysis/forecasts/doverie-i-nedoverie-v-rossii-20181015-111223/
3. Համաշխարհային արժեքների հարցում, https://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV7.jsp
4. Bjørnskov, Christian (2012), How Does Social Trust Affect Economic Growth?. Southern Economic Journal: April 2012, Vol. 78, No. 4, 1346–1368.
5. Knack, Stephen (2001), Trust, assocational life, and economic performance, MPRA Paper 27247, University Library of Munich, Germany, https://www.oecd.org/education/innovation-education/1825662.pdf
6. Roth, Felix, Does Too Much Trust Hamper Economic Growth? Kyklos, Vol. 62, No. 1, pp. 103-128, February 2009, Available at SSRN: https://ssrn.com/abstract=1329776 or http://dx.doi.org/10.1111/j.1467-6435.2009.00424.x
7. Verducci S., Schröer A. (2010) Social Trust. In: Anheier H.K., Toepler S. (eds) International Encyclopedia of Civil Society. Springer, New York, NY. https://doi.org/10.1007/978-0-387-93996-4_68

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ

АРМЕНИЯ И МИР

РОЛЬ СОЦИАЛЬНОГО ДОВЕРИЯ В ЭКОНОМИЧЕСКОМ РАЗВИТИИ

В статье рассматривается категория социального доверия, взаимодействие доверия и экономического роста, механизмы его влияния на экономическое развитие. В странах с низким уровнем социального доверия рост последнего способствует экономическому росту. В то же время, социальное доверие является устойчивым фактором в долгосрочной перспективе, возможности влиять на него ограничены, что обусловлено формирующими его факторами.

Ключевые слова: *социальное доверие, экономический рост, Всемирный обзор ценностей*

Shushan MOVSISYAN
Expert at «Amberd» Research Center, ASUE

ARMENIA AND WORLD

ROLE OF SOCIAL TRUST IN ECONOMIC DEVELOPMENT

In the paper, the category of social trust, mechanisms through which social trust affects economic development, links between social trust and economic growth are discussed. In the countries with low level of social trust, social trust tends to contribute to the economic growth. Meanwhile, social trust scores are relatively stable in the long run, the possibilities of influence on it are limited due to the factors that shape it.

Keywords: *social trust, economic growth, World Value Survey*